

են դաշանց ուխտին, որուն վրայ բնաւ չեմ տարակուսիր, փափաքելի էր ինձ մեղմով ազդել իրենց այդ բանը, եւ այս բանագնացութիւնս՝ մեծ ծանրութիւն մի կուտայ մեր գինուց արդարութեան: Կը տեղեկանամ ձեր պատմութիւններէն, թէ ձեր բոլոր թագաւոր նախնիք՝ միշտ պահած են այս գովելի սովորութիւնը. եւ որպէս զի փարատեմ ամէն կասկած խօսքերուս անկեղծութեանը վրայ, ես այդ պաշտօնը ամենայն յօժարութեամբ յանձն կ'անում. եւ թէպէտ չունիմ Անգլիացուց հետ ո՛չ ընտանութիւն եւ ո՛չ բարեկամութիւն, թերեւս աւելի կարող պիտի ըլլամ հաւանեցընել զանոնք՝ քան թէ ձեր ազգէն ուրիշ ո եւ իցէ մէկը, այն անողոքելի ատելութեան համար՝ զոր ունին անոնք Գաղղիոյ դէմ (1): »

Լեւոնի առաջարկն ուրխութեամբ ընդունուեցաւ, եւ Հայոց թագաւորը պատրաստուեցաւ Լոնդոն երթալ:

Բայց այն ժամանակուան երթեւեկութիւնը հիմակուանին նման զիւրին չէր. մանաւանդ պատերազմը բոլորովն խափանած էր ամէն ճամբայ, եւ անգլիական հողին վրայ օտար կոխելու համար մասնաւոր արտօնութիւն ձեռք բերելու էր: Արդ՝ Լեւոն իր հետեւորդներով Լոնդոն երթալու եւ թագաւորին հետ առանձին տեսակցութիւն մը ունենալու նպատակն հաղորդեց Անգլիայի թագաւոր Հոբքարդ (Richard) Բ-ին (1377—1399), որ սիրով ընդունեց Լեւոնի առաջարկը, եւ հարկ եղած ապահովագրերը պատրաստել տալով իսկոյն զրկեց Հայոց թագաւորին:

Անգլիական կառավարութեան բոլոր պաշտօնական գրութիւնները պարունակող բազմաճատոր հրատարակութեան մը մէջ (2), — որ տեսակ մը « Գիրք թղթոց » է, — 24 հոկտ. 1385 թուականին գրուած հետեւեալ երկու ապահովագրերը կը գտնուին, մին Լեւոնի անունով տրուած, իսկ միւսը՝ Լեւոնի տաճարապետ Յովհաննէս դը Ռուսպի:

Ապահովագիր տւեալ յսկումն Լեւոնի(3)

ԱՐՔԱՅՆ՝ համօրէն եւ իւրաքանչիւր ծովակալներուն, եւն., Ողջոյն, Գիացած ըլլաք որ՝

(1) Տե՛ս Բագմսլիկայի 1897 թ. մարտի Յաւելուածը: Հմմտ. Սեն-Գընիի կրօնաւորին Ժանսևակագիրքը, հս. Ա, Էր. 421:

(2) T. Rymer, *Foedera, conventiones et litterae* եւն., սպ. 1739—1745-ի, հս. Գ, մասն Գ, Էր. 186:

(3) Բնագիրք տե՛ս գրքիս վերջը՝ Document XVII.